



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԺ. Տ. ԱՎԵՏԻՍ ԲՅՆՅ. ԹՈՐՈՍՏԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱՒ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՒՐ ՀՈՎԻՒ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը այսու կը յայտնեն մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Արժ. Տ. Աւետիս Բնյ. Թորոսեան նշանակուած է Լաս Վեկասի Ս. Կարապետ ծխական համայնքի Հոգեւոր Հովիւ:

Տ. Աւետիս Բնյ. Թորոսեան աւելի քան եօթը տարի ծառայած է Սան Ֆրանսիսքոյի ծխական մեր համայնքին, իբրեւ Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ: Ան այժմ կոչուած է ծառայելու Լաս Վեկասի ծխական մեր համայնքին, որ, ինչպէս ծանօթ է, լծուած է եկեղեցաշէն աշխատանքի: Տեր Հայրն ու Ծխական Յանձնախումբը, Առաջնորդ Սրբազան Հօր ու Թեմիս ժողովականութեան վերահսկողութեամբ, կը յուսան ի մօտոյ ամբողջացնել Ս. Կարապետ եկեղեցւոյ շինարարական աշխատանքը:

Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ երկշաբաթեայ յաճախակիութեամբ Ս. Պատարագ կը մատուցուի: Հասցէն է 2054 E. Desert Inn Rd., Las Vegas, NV 89169.

Նշանակեալ Հոգեւոր Հովիւին կը մաղթենք յաջողութիւն, ծառայական իր առաքելութեան մէջ, իսկ Լաս Վեկասի մեր ծխական համայնքին կը մաղթենք յաւելեալ ծաղկում:

REV. FR. AVEDIS TOROSSIAN ASSIGNED PASTOR OF ST. GARABED PARISH COMMUNITY OF LAS VEGAS

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils hereby announce that Rev. Fr. Avedis Torossian has been assigned pastor of the St. Garabed parish community of Las Vegas.

Rev. Fr. Avedis previously served as pastor of St. Gregory Church in San Francisco for the past seven years.

The Las Vegas parish community is in the process of constructing St. Garabed Church; Rev. Fr. Avedis and the Parish Council are hopeful that the

project will be completed in the near future under the leadership and guidance of the Prelate and Councils.

Divine Liturgy is celebrated twice a month in the hall of the St. Garabed Cultural Center located at 2054 E. Desert Inn Rd., Las Vegas, NV 89169

We wish Rev. Fr. Avedis success in his new post.